



23. ՆԱԽՐՉԻՆ ՎԱԶԻՐ

Մեն թաքավոր կըլնի, էտ թաքավորը էնքան թավթավի, քեֆասիր, բեսայմազ մարթ կըլնի, որ իսկի չիմանա աշխարհ կաս, թե չըկաս: Սաղ օրերով, տարիներով քեֆից բացի ուրիշ բանի մասին չի մտածի, սաղ երկրի կառավարությունը կըհանձնի իրա վեզիրին ինքը ըսկի բանի չի խառնվի:

Թաքավորի վեզիրը ինքը վեզիրի տղա էր եղել: Նա ոչ մի խաբար ու տեղեկություն չունեւր ուշաքարի, բանվորի և քասիբ-քուսուրի կյանքից: Էտ վեզիրի բանը փեչեն տուրքեր տնելն էր: Էնքան տուրքեր էր տրել ժողովրտի վզին, որ ժողովուրտը էլ ընգել էր հետի թելը: Էլ սըթար-ղըուիզ չըկար: Վեզիրը տուրքերը հավաքում էր, ըսկի չարեքն էլ խազնեն չէր գնում, մեծ մասը բաժան-բաժան ին անում իրար մեչ, փայը-փուշտ ին անում, գնում էր: Տուրքերի դառդից ըռայաթը մե կտոր հացի, մե լաթ չորի հասրաթ էր մնացել: Ըռայաթը նալա՛ էր քաշում, ծեռը ճար չըկար: Էնքան խնդիրներ տվին, էնքան տիմումներ արին թաքավորին, որ էլ ճար-իլլաջ չըմնաց, թաքավորն էր մեկ օր շորերը փոխեց, ուր հետը վերցրեց վեզիրին և մի տասը հոքի էլ ուրիշ պալատականների, բոլորն էլ շորերը փոխած, հեծան ձիերը ու ընգան երկիրը ման գալու, ժողովրտի տրությունը իմանալու համար: Հասան մի մեծ գյուղ: Այդ գյուղը առաջ անվանի էր յուր ունեւոր ըլնելով, էլ մալ-կյանք, բաղ-բաղաթ, տավար-ոչխար, ամեն ինչով լի, բոլ, ժողովուրտը ուրախ, կուշտ, անդարտ...

Բայց այդ թաքավորի օրոք արդեն ինչպես ամեն տեղ, այնպես էլ էտ գյուղը աճյապես էր չքավորացել, այնպես էր քամվել, որ նմանվում էր մինչև հետին թելը թալանված գյուղի: Յամաք հացն ինչ ի, էն ցամաք հացին էլ կարոտ էին խեղճ ժողովուրտը: Տուրքերը քամել, չինել էին կնճիռ:

Թաքավորն էր իրա մարթկանցով իջան էտ գյուղի մեջ ու խնտրեցին, թե՛ դարիւր մարթ ենք, խնտրում ենք մեզ էս գիշեր դոնաղ արեք:

«Ղոնաղ անելը՝ կանենք, բայց իրեններս սև ի, սև ընի էսենց թաքավորի երեսը, ուտելիք չունենք, սըթար չունենք», — ասացին ժողովուրտը:

Դեհ ամենքին մե մարթ վայ նաչարի վերցրին, տարան ղոնաղ, բայց թաքավորը, որ ամենքից վատ էր հաքնված, մնաց, տրան տատող չեղավ:

Վերչը, երբ օրը մթնեց, մի պառավ կնիկ էկավ՝ թե. — Ախպե՛ր, արի՛, արի դու էլ ընձի ղոնա՛ղ եղիր, հայ քրիստոնյա ես, խո էս քչերվանը տուրսը չես մնա:

Թաքավորին ղոնաղ տարող պառավը գյուղի նախըջու մերն էր, գյուղում մի քանի ձեւո կով ու էծեր կային, պառավի տղան կըպահեր էտ ամբողջը: Իրա վարցն էր օրական էրկու հատ լավաչ հաց, որով կապրեին ինքն ու մայրը:

Պառավը թաքավորին պիրեց, նստեցին, պառավի տղան եկավ, էրկու հացը պիրեց, պառավը սկսեց. — Էսենց թաքավորի թախտը թառըմառ ընի, թամքը էրունով լցվի, տղամարթ մեռնի բալքի ինչալլահ. տուրքերով խեղճ ոայաթին ծըծել, արել է հարիսայի մեջի ոսկոռ, էտենց թաքավորը չքվի-չքանա բալքի, իրա ամրից խեր չըտեսնա... Կե՛ր, ղոնա՛ղ ախպեր, էս մեկ հացը մենք մերը-որդի կուտենք, էս մեկն էլ դո՛ւ կեր, չըկշտանա էսենց թաքավորը բալքի, ջանի վրա մահրում մընա:

Թաքավորը նստած տեղը չորացել, մնացել է:

Պառավի տղան խոսքի մտավ ղոնաղի հետ, նա էլ սկսեց թաքավորին մեղադրել, իմիջիպայոց ասեց, թե. — Թաքավորը իրա իրավունքը տվել է վեզիրին, մեկին, որը վեզիրի տղա է և աղքատի դրուժյունից ո՛չ մի խաբար չունի: Նա չի հասկանում ժողովրտի դրուժյունը ու մի գլուխ տուրքեր է դնում ու ժողովրտին հասցրել է մուրացկանի դրուժյան:

Ու այդպես շատ խոսեցին, վեկացան քնան: Առավոտ ղոնաղը մնաս բարև ասեց, թողեց գնաց: Մյուսներն էլ հավաքվեցին, հեծան ձիանքը, հեռացան:

Թաքավորը հարցուց, թե ի՞նչ դրուժյան մեջ է ժողովուրտը: Բոլորն էլ ասին, թե ժողովուրտը շատ վատ դրուժյան մեջ է, և թե տուրքերի ծանրությունից երկիրը քամվել, ավերակ է դարցել: Թաքավորն էլ յուր տեսած-լսածը պատմեց: Էտպես շատ տեղեր ման էկան, ամեն տեղ էլ հայհոյանք ու անեծք լսեցին, լաց ու հառաչանք, դժգոհություն...

Երբ տարցան-եկան ուրանց տեղերը, թաքավորը մարդ ուղարկեց, թե. — Գնացեք էն ընձի ղոնաղ արող պառավի տղային պիրե՛ք:

Գնացին պառավի տղային՝ թե.—Արի՛, քեզ թաքավորը կանչում է:

Վերցրին պերին թաքավորի մոտը: Էկավ, պատիվ պոնեց, կայնավ:

Թաքավորը ասեց.—Ընձի ճանաչո՞ւմ ես:

Տղան թամանտ արավ, տեսավ, որ իրանց ղոնաղն է, մտածեց, թե՛ էտ է, մեր վերչը էկավ:

Ասաց.—Թաքավո՛ր ապրաց կենա, ճանաչում եմ:

Ասեց.—Այ տղա, մորտ հետ ինձ լա՛վ ամոթանք տվիք, հա՛:

Ասեց.—Թաքավո՛ր, երբ չորերդ փոխել էիր, ուրեմն և պետք է ճշմարիտ խոսքեր լսեիր: Չէ՞ որ մեծերի երեսին ճշմարիտ չեն խոսում:

Թաքավորը հրամայեց տղային տանեն համամ, չորերը փոխեն, թաքավորավայել չորեր հաքցնեն, պիրեն: Հետո հրամայեց, որ վեզիրին գլխատեն, իսկ նախըջուն նշանակեց վեզիր:

Հետո կանչելով նախըջի-վեզիրին, ասեց.—Ես քեզ լիովին իրավունք եմ տալիս, արա՛, կառավարի՛ր երկիրը էնպես, ինչպես սիրտդ կուզի:

Նախըջի-վեզիրը անմիջապես տուրքերը թեթևացրեց, ջառքեց, թե ով կարիք ունի, կարող է պետական գանձարանից փող վերցնի, իրա կարիքը հոքա ու միայն յոթը տարի հետո առանցի տոկոսի ետ տա իրա պարտքը: Ժողովուրտը ոնց որ նոր մորից ծնվի: Ոնց որ մարդու կրծքի վրայից մի քար վերցնեն: Նոր վեզիրը այնպիսի կարքեր տրեց, որ երկիրը տրախտ տարձավ:

Մեկ-էրկու տարի անցավ, ժողովուրտը կարքին իրանը պոնեց: Էլը սկսվեցին հարսանիքների տուտը, էլը քեֆ-ուրախություն... Ժողովուրտը սկսեց օրհնել թաքավորի և վեզիրի կյանքը: Միառժամանակ անց թաքավորը էլի չորերը փոխած, վեքիլ-վեզիրի ու պալատականների հետ դուս էկան ժողովրտի մեջ ման գալու և տեսան, որ ժողովուրտը չա՛տ գոհ ու ուրախ է և չնորհակալ թե՛ թաքավորից և թե՛ վեզիրից: Ոչ մի դժգոհություն, ոչ մի անեծք կամ գանգատ... Հետ էկան, թաքավորը ավելի սիրեց վեզիրին ու ավելի իրավունքներ տվեց նրան: Նախըջի-վեզիրը իր ստացած ոռճիկից մի ոսկե սնտուկ չինել տվեց ու դրեց տանը: Ոչ ոք չըզիտեր՝ ինչ կար նրա մեջ: Բայց պալատականների նախանձը կրնգակոխ հետևում էր վեզիրին, և որովհետև իրանց դարամուտը կտրվել էր, մե գլուխ տիմուճներ էին գրըմ թաքավորին, մատնություններ էին անում, թե նոր վեզիրը կաշառակեր է, թե նա գող է, թե ոսկի սնտուկ է չինել ու գանձարանի թանգազին քարերը կողոպտել, լցրել է մեջը և այլն: Այնքա՛ն գրեցին, մատնեցին, նվացին, որ

Թաքավորը մտադրվեց անպատճառ մի փորձել, իմանալ՝ ճիշտ է արդյոք տրանց ասածը:

Մի օր Թաքավորը հետն առավ բոլոր զանգատավորներին ու գնաց վեզիրի տունը՝ ցույց տալով՝ որպես թե դոնադ է եկել: Վեզիրը յուր մոր և կնոջ հետ ապրում էին միայն երկու սենյակի մեջ, իսկ սենյակները այնքա՛ն համեստ, որ ոչ մի ավելորդ ու ճոխ բան չըկար:

Թաքավորը մարդկանցով անցան մյուս սենյակը, նույնպես տարտակ, միայն ճիշտ որ այդտեղ մի ոսկի սնտուկ կար: «Ըհ՛, — մտածեց Թաքավորը, — էտ ի՞նչ սնտուկ է», — հարցրեց Թաքավորը:

— Էնպես, ես եմ չինել տվել, — ասեց վեզիրը:

— Բա՛ց արա, տեսնենք՝ մեջը ի՞նչ կա, — ասեց Թաքավորը:

Նախըջի-վեզիրը բաց արեց՝ ինչ, մեջը՝ նախըջու տրեխները և հին չորերը...

— Էտ ի՞նչ բան է, — ասեց Թաքավորը:

— Էտ նրա համար է, որ իմ հին օրերիս նշանը միշտ իմ աչքիս առաջին լինի, որ ես քո հին վեզիրի նման անիրավ բան չանեմ, հիշո՞ւմ ես մեր տան մեջ իմ ու քո զրույցը, Թաքավո՛ր, — ասեց վեզիրը:

Թաքավորը զրպարտիչների գուխը կտրել տվեց ու վեզիրի իրավունքները ավելի բարեցրացրեց:

